

# ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

## ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ ՍՏԵՓԱՆ ԱԼԱԶԱԶՅԱՆԻ «ՉՍՊԻԱՑԱԾ ՎԵՐՔ» ՎԵՊՈՒՄ

*Բանալի բառեր – Ստեփան Ալաջաջյան, Գինդ, Նանե, «Չսպիացած վերք», Կ. Պոլիս, վեպ, դիվանագիտություն, արևմտահայություն, բարենորոգումներ, բռնագաղթ, ճանաչողական արժեք, ազատասիրական ոգի, պատրիարք, ազատամարտիկ*

Ստեփան Ալաջաջյանի «Չսպիացած վերք» եռահատոր վեպը (առաջին տպագրությունը՝ 1989, 1990, 1993 թթ., երկրորդը՝ 2019 թ.) պատմական հավաստիությամբ, մատուցվող նյութի խորությամբ և գործող հերոսների գրավիչ մարմնավորումներով պատկերում է արևմտահայոց ծանր ու օրհասական վիճակը Առաջին աշխարհամարտին նախորդած տարիներին ծրագրված և պատերազմի ընթացքում իրականացված թուրքական բռնությունների ու նախճիրների պայմաններում և Կիլիկիայի բնակավայրերից մեկի՝ Տնդիճաքի մղած ինքնապաշտպանական հերոսամարտը:

Բազմածրագրային այս վեպն իր արժանի տեղն ունի մեր ժողովրդի եղեռնապատումի ու հերոսապատումի գրականության՝ արդեն դասական դարձած գործերի շարքում:

Վեպի սյուժեն, ծավալվելով Բեռլին-Բոսֆոր-Բաղդադ երկաթուղու շինարարության առնչություններով, գեղարվեստական ու վերլուծական համապատկեր-ընդհանրացումների միջոցով շոշափում է ռազմական, քաղաքական, ազգային ու մարդկային բազմաբնույթ իրողություններ: Հարկավ, վեպում ծավալվող դեպքերի առաջմղիչ ազդակները քաղաքական և ազգային խնդիրներն են, սակայն դա չի խանգարում, որ հեղինակը հյուսիս սիրո, ընտանիքի, երկրի ու բարքերի, նվիրյալ հոգիների և հերոս անհատականությունների ամբողջական պատմություններ, որոնք վեպին կենսականություն են հաղորդում, ավելին՝ այն դարձնում գրավիչ, հետաքրքրական ու գեղարվեստորեն հարուստ: Գրողի երևակայությունը թևածում է հատկապես այն էջերում, որտեղ պատկերում է արարող-ստեղծող հայ մարդու մտածումները և գործունեությունը, Հայաստան երկրի ու նրա լեռնաստանների, բերքատու այգիների և դաշտերի, խորխորատ ձորերի, գուլալ աղբյուրների, շեների ու սաղարթախիտ անտառների նկարագրությունները: Եվ այդ ամենը՝ լցված անհուն մի գորովով, ջերմեռանդ մի սիրով առ հայրենի ծննդավայրն ու հայ ընտանիքը:

Վեպի առանձնահատկություններից են գործող հերոսների խոսքի ու նկարագրի բազմադիմությունը, նրանց գործողությունների տրամաբանական ընթացքը, երևույթները ճիշտ գնահատելու և մեկնելու հեղինակային կարողությունը, հատկանիշներ, որ յուրաքանչյուր գրողի ստեղծագործական ունակության կայուն առիավատյան են, նրա ներաշխարհային հույզերի հարստության, կյանքի ճանաչողության, քաղաքական խորագիտության ու մտավոր իմացությունների ապացույցները: Այս առումով Ալաջաջյանը վեպում կերտել է ընթերցողի հիշողության մեջ մնացող մարդկային բազմաթիվ կերպարներ:

Ուշագրավ կերպար է Արմենակը: Հինգ որդիների, աղջկա ու թոռների տեր այդ մարդը բարի ու ազնիվ հոգի է, որ հողի և լույսի պաշտամունք ունի, չփլվող տան ու խաղաղ կյանքի երազանք: Ճակատագրի բերումով՝ նրա ընտանիքը ցիրուցան է լինում. մեկը՝ Արմաշ, մեկը՝ Էրեյլի, մեկը՝ Կ. Պովիս, մեկը՝ Ֆնդիճաք... Արմենակը գերդաստանի ներքին խորհուրդն ամփոփող հայ ընտանիքի սրբազան նվիրումների կրողն է ճիշտ այնպես, ինչպես Ֆնդիճաքի տանուտերը՝ քեհյա Մինասը՝ իր որդիներով ու քաջազարմ կնոջով: Եվ պատահական չէ, որ և՛ Արմենակը, և՛ Մինասը զոհ են գնում թուրք կանոնավոր զորքերի հարձակմանը, քաջարի մարդիկ, որ իրենց աճյուններով դառնում են Ֆնդիճաքի դիմադրության հարատևող խորհրդանիշները:

Ինչպես վերոհիշյալ հերոսները, այնպես էլ ամբողջ Ֆնդիճաքը, որ առաջ աշխատում էր դաշտերում, անտառների թավուտներում, տների կտուրների քնում, տան անդամների և դրկիցի հետ զրուցում հողից, ցանքից ու հունձքից և աստղերի մասին հեքիաթներ հյուսում, ստիպված է զենք վերցնել՝ լավ գիտակցելով, որ ինքը հաղթելու համար չէ, որ կռվում է, այլ իր պատիվը, հողը, երկիրը երաշտի պես խանձող չար ուժերից պաշտպանելու համար:

Ուշագրավ է, որ երբ կենդանի մնացած ֆնդիճաքցիները, որոնք քշվել էին Իսլահիեի գաղթակայան, ամեն ինչ ոչնչացնող երաշտից հետո առաջին անձրևն են տեսնում, բոլորը դուրս են թափվում իրենց գետնափոր հյուղերից ու կանգնում անձրևի տակ՝ ամեն մեկը յուրովի դառնալով ***Խաչ-անձրևահարս***\*. «Նանեն նրանց էր նայում ու թվում էր՝ տեսնում է հարյուրավոր անձրևահարսներ, խրտվիլակներ, որոնք ցնցոտիներ էին հագել ու թևաբաց թրջվում էին: Խաչափայտեր էին, փոքրիկ, գետնի վրա հագիվ մեխված կամ օրորվող, կնճռոտած, հնամաշ:

*Խմում էին անձրևը:*

*... Ո՛չ, դեմքերի վրա միայն անձրևը չէր, այլ նաև՝ արտասուք...»<sup>1</sup>:*

---

\* Հայ հավատացյալները ամեն տարի մեկնում էին Ուխտասար, օրհնված լաթեր հագնում խաչափայտի վրա և այն կոչում «Անձրևահարս», որը խոնավ ամպեր պիտի պարզվեր բնակավայրերին ու անտառներին:

<sup>1</sup> **Ալաջաջյան Ստ.**, Չսպիացած վերք, հ. III, գիրք 1-ին, Երևան, 2019, էջ 270:

Վեպում հանդես են գալիս բազում գործող անձինք՝ աշխատավոր մարդիկ, մտավորականներ, քաղաքական ու հասարակական գործիչներ, պաշտոնյաներ, զինվորականներ, կառավարիչներ, կրոնավորներ... Նրանց մի մասը վեպում կերպավորման աստիճանի է բարձրացված, մի քանիսի վերաբերյալ հեղինակը լուրջ անդրադարձումներ կամ հիշատակումներ է կատարում: Քիչ չեն նաև պատմական անձնավորությունները, որոնք հանդես են բերվում երբեմն որպես ծավալվող գործողությունների մասնակիցներ՝ Կոմիտասը, Գրիգոր Զոհրապը, Յոհաննես Լեփսիուսը, Մադաքիա Օրմանյան և Զավեն Եղիայան պատրիարքները, թուրքական իշխանությունների մի շարք առաջնորդներ, Թուրքիայում գերմանական դեսպանության աշխատակիցներ, երբեմն էլ լուրջ որպես անուններ՝ Պողոս Նուբար Փաշան, Հալեպի հյուրանոցի տնօրեն Օննիկ Մազլումյանը, Ռուբեն Զարդարյանը, Նազարեթ Տաղավարյանը, գերմանացի, անգլիացի, ֆրանսիացի զանազան պաշտոնատար գործիչներ ու այլ օտարերկրացիներ, որոնցից մեկն էլ հայատյաց, ֆրանսիացի Պիեռ Լոթիեն է, ով կովկասյան ռազմաճակատում թուրքերի կրած նահանջն իր հողվածներում պատճառաբանում էր հայերի դասալքությամբ\*:

Մի շարք հերոսներ հեղինակային մտքի ծնունդ են, որոնք, սակայն, այնքան վարպետորեն են կերտված, որ գեղարվեստական դրսևորումներից զատ թողնում են իրականում գոյություն ունեցած ու գործունեություն ծավալած անձանց տպավորություն, որը վեպի պատումի յուրահատկություններից է մեկն է:

Վեպում ծավալուն տեղ է հատկացված Կ. Պոլսի երկու պատրիարքներին՝ հանձինս նրանց կերտելով իրենց ժողովրդի ճակատագրով ապրող ու տառապող կրոնավորների գրավիչ կերպարներ: Բռնությունների և աքսորների այդ ծանր տարիներին նրանք ծավալում են դիվանագիտական, քաղաքական ու ազգային հանրօգուտ գործունեություն, անում ամեն ինչ՝ մեղմելու թուրք մարդակերների մտադրությունները և հայատյացությունը, ջանում մեծ տերությունների ուշադրությունը հրավիրել արևմտահայոց նկատմամբ կիրառվող հալածանքներին: Եվ այդ ամենը՝ շաղախված նրանց ներաշխարհում կատարվող հոգեկան ծանր տվայտանքների հետ:

Ալաջաջյանը հատկապես ջերմորեն է արտահայտվում Մ. Օրմանյանի մասին, անդրադառնում ոչ միայն նրա ազգային ու կրոնական գործունեությանը, այլև պատմագրական արժեք ունեցող «Ազգապատում» աշխատությանը\*\*:

Վեպում հեղինակը մի քանի անգամ է անդրադառնում այդ գործին, իրավացիորեն շեշտում, որ այն հավաստի մի ասք է կառուցվող և կանգուն

---

\* Լոթիեի մասին ժամանակին նողկանքով է արտահայտվել նաև Շ. Շահնուրն իր «Ֆրանսահայ տողանգք» գրությունում: Տե՛ս **Շահնուր Շ.**, Երկեր, Երևան 1985, էջ 137:

\*\* Մ. Օրմանյանի այս գործի մասին Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետը գրել է, որ այն «Հայաստանեայց եկեղեցույ պեկոժ. այլ հերոսական բազմադարեան կեանքի պատկերն» է: Տե՛ս **Մ. Արք. Օրմանյան**, Ազգապատում, Մ. Էջմիածին, 2001, «Երկու խոսք», էջ 3:

հայոց վանքերի, զարգացող դպրության, կրոնավորների նվիրման, ծաղկվող գրքերի ու մագաղաթների և այդ ամենն ստեղծող ժողովրդի մասին:

Վեպում պատկերվող գործողությունների մի ահագին մասը Կ. Պոլսում է ծավալվում: Կատունների այդ քաղաքում (ըստ ավանդության՝ կատուն էր փրկել Մուհամմեդին օձի խայթոցից), հայոց եղեռնի նախասպանդանոց այդ ոճրատանն է հյուսվում գեհեներ: Մարմարայի ափի յոթ բլուրների վրա տարածված քաղաքի գեղատեսիլ բնության հակադրությամբ Ալաջաջյանը մերկացնում է թուրք բռնակալության քաղաքական, ռազմամոլական ու ազգայնամոլական ամբողջ էությունը, պատկերում այն գաղջ մթնոլորտը, որի մեջ հայտնվել էին քաղաքի հույն, հայ, հրեա և այլ՝ ոչ մուսուլման բնակիչները: Տպավորիչ են հատկապես թուրքական կառավարական շրջանակներում տիրող խարդավանքների, նենգությունների և ստորությունների վերհանումները, որոնք հաստատում են մի բան. ամբողջ Թուրքիան է թաղված աղբի ու ցեխի մեջ, և դրանցից դուրս գալու ճանապարհներ չկան:

Հավաստի գույներով են ներկայացված ստամբուլահայության նաև հասարակական, քաղաքական, կրոնական և ազգային հարաբերությունները, որտեղ ազնիվ հոգիների կողքին գոյատևում են նաև հոգով ու մտքով սնանկ մարդիկ, ովքեր անտարբեր ու անհոգ են ծավալվող ողբերգական իրողությունների հանդեպ: Սրան հակառակ՝ գրողը ցույց է տալիս, որ գավառի հայ մարդը նման է իր բնաշխարհին. նրա նման շռայլ է, բարի ու ազատասեր:

Ալաջաջյանի գրիչը դառնում է բեղուն, ձեռք բերում ընդգծված քնարականություն հատկապես այն հատվածներում, որոնք վերաբերում են բնաշխարհի ու եզերքի պատկերումներին, Լեռնային Կիլիկիայի անտառների, լեռնաստանների, խորխորատների, ուխտատեղիների ու սրբատեղիների նկարագրություններին: Պակաս արժեքավոր չեն Գինդ-Բերթա փոխհարաբերություններն արտացոլող էջերը, իսկ նրանց զգացումների խորքը պատկերող դրվագներն աչքի են ընկնում թարմությամբ ու գրավչությամբ:

Վեպում թուրքական իշխանությունների ու կառավարության ներկայացուցիչների, այդ թվում՝ կառավարման ցածր օղակներում գտնվող և անգամ թուրք կանանց ընդհանրական կերպավորումներն առանձնանում են վարքագծի, մտածողության ու գործունեության սպառիչ բնութագրումներով, որտեղ հատկապես շեշտվում են կենդանակերպ այդ մարդակերների դաժանությունը և լկտիությունը, նրանց մեջ արդարության ու խղճի իսպառ բացակայությունը, հայատյացության առկայությունը, որը դարերի խորքերից է գալիս և շարունակվում բոլոր սերունդների բնագոյների մեջ: Սյդպիսի մի արարած է Հալիդե Էդիպը: Հասարակական ու քաղաքական գործիչ այդ արարածը, որ բանաստեղծուհի էր նաև, ոչ միայն թուրք խառնամբոխներին ջարդի մղող պատգամներ է տալիս, այլև անձամբ շրջում է երկրով մեկ՝ հայ երեխաների թլփատումները կազմակերպելու համար:

Վեպում հեղինակի գեղագիտական իդեալը մարմնավորված է գլխավոր հերոսի կերպարով, ում տրված անվանումներով ևս շեշտվում են նրա՝ մի

կողմից կրոնական հանգամանքը՝ Շահեն Մեռոնյան, մյուս կողմից՝ աշխարհիկ կացությունը՝ Գինդ Մեռոնյան, երկու դեպքում էլ՝ Մեռոնյան, ասել է թե՛ մաքուր, անարատ: Ունենալով հանդերձ կրոնամետ նկարագիր և եկեղեցական աստիճան՝ աբեղա, լինելով եկեղեցու ծառայող, պատրիարքի հանձնակատար, պատարագներ վարող, հրաշալի սաղմոսներ երգող, խորանների ներքո Եկմայյան ու Կոմիտաս հնչեցնող՝ նա միևնույն ժամանակ լավատեղյակ է աշխարհիկ ու ազգային խնդիրներին, ընդհուպ այն աստիճանի, որ գիտակցում է զենքի և ուժի դերը ժողովրդական ինքնագոյության և ինքնապաշտպանության գործում, ավելին՝ ինքն անձամբ զենք է վերցնում ու մասնակից դառնում ժողովրդի և հայրենի եզերքի ինքնապաշտպանական մարտերին:

Ամբողջ վեպի ընթացքում Գինդը յուրատեսակ հանգույց է, ում մասնակցությամբ, ներկայությամբ կամ առնչությամբ տեղի են ունենում գործողություններ, դեպքեր, խոսակցություններ, բացահայտվում մարդկային հարաբերություններ, որոնք ազուցում են հեղինակային շարադրանքը, այն դարձնում միասնական: Իր ամբողջ էությանբ լինելով արվեստակիր անձնավորություն, սիրելով իր հարազատներին՝ նա պաշտամունքի աստիճանի նվիրվածություն է ցուցաբերում այն ամենի նկատմամբ, ինչն առնչվում է հարազատ ժողովրդի կացությանն ու ճակատագրին: Բարձր մտածողության տեր այդ մարդը թեև ունի փխրուն հոգի, սիրասուն սիրտ, բայց անանձնական է իր ամեն մի քայլում, իր գործով հաստատում է բարության, արդարության և նվիրման այն վեհ գաղափարները, հանուն որոնց պայքարում են մահվան գրկում հայտնված իր ազգակիցները: Ալաջաջյանը միագիծ չի կերտել նրա կերպարը: Նրա ներաշխարհում բախման մեջ չեն զգացմունքն ու միտքը, ազգայինը և անձնականը, հոգևորն ու աշխարհիկը, սակայն դրանցից որևէ մեկին նախապատվություն տալու որոշումը հաճախ է ծառանում նրա առջև, մտածել տալիս, քանի որ մի կողմում կմնային այն հարցերը, որոնք նույնքան *կարևոր* էին, որքան որ *անհրաժեշտ*. Եթե ամբողջովին նվիրվեր իր սքեմին, ինչ պիտի լինեին իր աղոթքի խոսքերը, և ինչ պիտի խնդրեր ինքը, իսկ եթե աշխարհիկ գործերով զբաղվեր, չէր դատարկվելու իր ներաշխարհը...: Եկեղեցուն, ապա կնոջը՝ Բերթային, ու զավակին, իսկ հետո՝ ուսուցչությանն ընծայաբերած նրա նվիրումներն ի վերջո անգոր են դառնում շատ ավելի մեծ մի սիրո, ծառայության ու պարտականության առջև՝ զենք վերցնել և կռվել ժողովրդի գոյատևման համար՝ հասկանալով, որ տարագրումը մահ է, կռվելն էլ մահ է, բայց այդ կռվի մեջ թշնամու մահն էլ կա, և ուրեմն՝ պատվով մահ է:

Գինդը որոնում ու չի գտնում այն հարցի պատասխանը, թե ինչու իր ժողովրդի անցած դաժան ճանապարհը նրան չի դարձրել միատարր, անբաժանելի մի ձուլվածք: Չէ՞ որ զրկանքն ու տառապանքը պետք է որ մաքրեին նրա հոգին, հստակեցնեին միտքը, հարստացնեին կենսափորձը, գործունեության վճռականության հանգեցնեին: Չգտնելով իրեն տանջող հարցերի պատասխանը, զինվորագրվելով հանդերձ ժողովրդական պայքարի գործին՝

Գինդը, այնուամենայնիվ, հոգով ու էությունաբ շարունակում է մնալ հոգևորական. կրակում է ու չի ուզում մարդ սպանել, անգամ սարսափում է այն մտքից, որ կարող է մեկին վիրավորել, ամեն անգամ կրակելիս ամբողջ էությամբ դողում ու ցնցվում է՝ արդյո՞ք մարդ սպանվեց:

Տարաբնույթ իրադարձությունների բովում հեղինակը հաճախ է դիմում իր հերոսին՝ «Գի նդ, Գի նդ, հագի՛ր սքեմդ», որը նշանակում է՝ հավատարի՛մ եղիր ազգիդ, ժողովրդիդ, հայրենյաց հավատքին: Սքեմ, որ չի նշանակում պատյան կամ սահմանափակում, այլ ճիշտ հակառակը՝ ազատության հագուստ: Եվ Գինդն էլ հենց այն անձն է, որ չի ուզում ճանաչել ու չի հանդուրժում և ոչ մեկին, ով այդ նվիրումների հավատավորը չէ: Գինդի սքեմապաշտությունը չի նշանակում, որ նա լոկ պարզ հավատացյալ է: Նրա աստվածընծա ծառայությունն ամենից առաջ ուղղված է իր ժողովրդի փրկության գործին և հաստատում է մի ճշմարտություն. ոչ թե ժողովուրդն է հավատքի համար, այլ հավատքը՝ ժողովրդի, ու ամեն մի հոգևորական ոչ այնքան պիտի ծնրադրի խորանների առջև, որքան կանգնի իր ժողովրդի կողքին:

Վեպում միանգամայն համոզիչ է հնչում Գինդի վճիռը՝ զե նք վերցնել: Ազգասիրական ոգով համակված Գինդն իր ժողովրդի սիրո համար արդեն հեռացել էր իր սիրած էակից ու որդուց՝ չդառնալով ամուսին ու հայր: Գինդը համոզվել էր, որ խնդրագրերը, խոստումները, դաշինքներն ու պայմանագրերը ոչինչ չեն տալիս իր ժողովրդին: Եվ հիմա, երբ նա ականատեսն էր ծերերի, երեխաների, կանանց նկատմամբ իրականացվող անխնա նախաճիքի, չի կարող ամփոփվել իր կրոնական զգացմունքների մեջ և մի կողմ քաշվել ժողովրդի գոյամարտից:

Թուրքական իշխանությունների կողմից Հնչակյան կուսակցության քսան գործիչներին կախաղանի դատապարտման առիթով ունեցած գրույցում Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը մեկ այլ գերմանացու՝ Ֆայնբերգին, ասում է, որ թուրքերն ամբողջ հայ ժողովրդին կախելու «*n չ անտառանյութ, n չ պարան*» ունեն և «*արտաքսելու ձևն են մտածել*»: Իսկ Ֆայնբերգը նրան հարցնում է. «*Դուք ճանաչե՞լ էք Գինդին*», և ինքն էլ տալիս է կախվողների ստույգ բնութագիրը. «*Գինդեր էին նրանք՝ այդ կախվածները*»: Ասել է՝ էությամբ, արտաքինով ու հոգով անարատ մտավորականներ, հավատավորներ էին կախվածները, ինչպես որ ներքուստ մի հեղափոխական հոգի էլ Գինդն է: Ասել է՝ նույնպիսի Գինդեր էին բոլոր արտաքավածները:

Նա, ում ամենասիրած էությունը Հիսուսն է, իրականում դժբախտ մի հայ է, ով կորցնում է իր ամբողջ գերդաստանը, զրկվում ընտանեկան երջանկությունից՝ կնոջից ու զավակից, հավատի իր եկեղեցուց և իր տարագիր ժողովրդից: Գինդի ու նրա ժողովրդի աստվածները հեռացել էին նրանցից: Նրանց պիտի հետևեին նաև Գինդն ու իր հավատապաշտ ժողովուրդը՝ նույնպես սրբագործելով իրենց անցած ուղին և հիշատակը:

Արմենակի որդիներից մեկը՝ Նվիրակը, որ Գերմանիայում կրթություն է ստացել և այժմ աշխատում է որպես երկաթգծի շինարար, այն մտայնու-

թյունների կրողն է, ըստ որի՝ դիմադրողական գործունեության դիմելը կործանարար կլինի ժողովրդի համար: Վեպի ամբողջ ընթացքում նա անում է ամեն ինչ՝ այս կամ այն կերպ օգնելու կամ փրկելու իր ազգակիցներին, ազնվորեն կատարում իր աշխատանքային պարտականությունները, սակայն այդպես էլ չի գտնում իր դավանած խոհեմությամբ նրանց արտրվելուց ու սպանվելուց փրկելու ուղիները, և ի վերջո ինքն էլ է ապավինում զենք վերցնելու գաղափարին:

Ալաջաջյանը վեպում կերտել է ժողովրդի ծոցից դուրս եկած մի շարք ազատատենչ մարդկանց գրավիչ ու հարագատ տիպարներ: Նրանցից մեկը՝ Նանեն է՝ Ֆնդիճաքի տանուտեր Մինասի կինը: Վրիժառու այդ հայուհին իր հինգ որդիներին կռվի է մղում, անձամբ զենք վերցնում ու մարտնչում թուրքական կանոնավոր զորքերի դեմ: Հավատապաշտ այդ կինը, որ ամեն առավոտ Աստվածածնի պատկերի առջև աղոթք էր անում, հուսահատությունից հողի տակ է թաղում սրբի նկարը՝ իր հոգում ևս թաղելով ի վերուստ եկող օգնության ու փրկության հույսը: Առ Աստվածամայրն իր աղոթքներից մեկում նա խնդրում է պահպանել իր ամուսնուն ու որդիներին, Ֆնդիճաքին պատուհասած երաշտից ազատվելու համար անձրև թախանձում. *«Աղաչում եմ,– աղոթեց նա,– Աստվածամայր, լսիր ինձ, ես էլ կին եմ և մայր: Դու հինգն\* ունեիր, ես էլ հինգն ունեմ: Քո մեկը՝ Հիսուսը, Աստծուց էր, իմ հինգն էլ Մինասից են»*<sup>1</sup>:

Նանեն իր որդիներին հավասարեցնում է Աստվածամոր որդու հետ: Ասել է՝ ամեն մի մոր համար իր զավակները մի-մի Հիսուսներ են, և նրանց մահը սրբացում է:

Ազատագրական պայքարի անմնացորդ նվիրյալ է Պետրոսը: Բռնապետական կյանքի բերումով ֆիդայի դարձած Պետրոսը, ում ստիպողաբար թուրքական բանակ են գորակոչել ու տարել ռազմաճակատ, սթափ գիտակցելով, որ ծառայում է իր ժողովրդին լլկողների ուժերում, փախչում է և զենք վերցնում՝ պաշտպանելու տանջահար ժողովրդի կյանքը: Կռիվների մեջ թրծված Պետրոսն անցնում է տառապանքների երկար ճանապարհ, Ֆնդիճաքի անկումից հետո էլ իր զենքը վայր չի դնում, ռազմական իր իմացությունները կիրառում է կռվի այլ դաշտերում:

Պետրոսից ոչ մի բանով հետ չի մնում հարմանդ (ջորեպան) Ավետիքը: Բնության այդ ազատ զավակը՝ Ֆնդիճաքի անտառների, լեռների ու կածանների հմուտ գիտակը, իր երկրի սիրով է լեցուն, խիզախ և համարձակ մարդ է, որ ելել է հրդեհներից լաց լինող անտառները, հրկիզվող հայրենի հողն ու նրանց գրկում ապրող մարդկանց թուրք ճուռակների\*\* ճիրաններից պաշտ-

---

\* Ըստ աստվածաբանական որոշ դավանանքների՝ Մարիամը, Քրիստոսից զատ, ունեցել է նաև այլ զավակներ:

<sup>1</sup> Ալաջաջյան Ստ., Չսպիացած վերք, հ. III, գիրք 1-ին, 2019, էջ 5:

\*\* Անգղարևոտանիքների մագիլակիթ թռչուններ, որոնք, ի տարբերություն ցեղակիցների, իրենց գոհերին որսում են ոչ միայն օդում ու գետնին, այլև՝ ջրում:

պանելու համար: Ինքնապաշտպանական մարտերի ժամանակ նա հայտնվում է ամենուրեք, կռվում ամենադժվարին դիրքերում և հավատացած է, որ միայն զենքին փարվելով է, որ կարելի է փրկել ոչ միայն ազգային արժանապատվությունը, այլև՝ ազգային գոյությունը, այն գոյատևումը, որը ենթադրում է հայրենական հողի վրա մնալ ու ապրել:

Կռվկասյան ռազմաճակատ տարված Մեսրոպը, որին թուրքերը Մուսրեբ անունն էին տվել, հոգեկան ծանր մղձավանջների մեջ է հայտնվում: Հեռվում թողած իր սիրասուն կնոջը՝ Ծավիին, ու մեկ տարեկան որդուն՝ Վահեին, նա պարտադրված է իրեն տրված հրացանով կրակել. «Ո՞ւմ վրա եմ կրակում, ո՞ւմ դեմ: Ռուսի՞, հայի՞, վրացո՞ւ, կոզակի՞: Աստված մի արասցե, որ մարդ սպանվի իմ գնդակով...»<sup>1</sup>:

Իրենց ժողովրդի ողբերգական ճակատագրի կրողներն են նաև հայ հոգևորականները: Վեպում հանդես եկող Հուսիկ քահանան, Պսակ քահանան և մի շարք այլ կրոնավորներ տարագրության նույն ճամփաներով են քայլում, խոշտանգվում ու սրախողխող լինում, նահատակվում՝ իրենց հավատին, ուխտին և ժողովրդին հավատարիմ մնալով:

Վեպում հանդես են բերված մի շարք գերմանացի գործիչներ՝ դիվանագետներ, քաղաքագետներ, զինվորական կցորդներ, հասարակական ու կրթական ասպարեզի ներկայացուցիչներ: Նրանցից շատերը գերմանական շահերի տիպիկ պաշտպաններ են, անգամ՝ սադրիչներ: Այդ համապատկերում առանձնանում է Ֆայնբերգը, ով, *ինկոգնիտո* (անճանաչ) կերպով ժամանելով Ստամբուլ և հանձնարարություն ունենալով կազմակերպել Բեռլին-Բոսֆոր-Բաղդադ երկաթուղու աշխատանքները, ժամանակի ընթացքում շփվում է հայերի ու հայկական խնդիրների հետ և խորանալով ու հասկանալով հայ ժողովրդին վիճակված կյանքը՝ Ստամբուլից հեռանում է վերափոխված, *ոչ ինկոգնիտո*՝ այս անգամ ճանաչած թուրքական հայատյաց քաղաքականության ամբողջ նենգությունը:

Հայասեր գերմանացու մի ուրիշ կերպավորում է Բերթան՝ Գինդի կինը, որ ազնիվ նպատակներով եկել է Թուրքիա և մանկավարժական գործունեություն է ծավալում: Լինելով ազնիվ հոգի ու կրթված անձնավորություն՝ նա շատ շուտ է հասկանում իր հայրենակիցների շահադիտական նպատակներն ու հեռուն գնացող քաղաքական ծրագրերը: Բերթան սիրում է Գինդին, նրանից երեխա ունենում, անգամ մի պահ մտածում իր ամուսնուն Գերմանիա տանելու և դրանով նրա կյանքը փրկելու մասին: Սակայն, միևնույն ժամանակ, հասկանում է նաև, որ հայ ժողովրդի համար օրհասական այդ շրջանում Գինդն իր ժողովրդից չպիտի բաժանվի ու պարտավոր է նրան ծառայել մտքով և հոգով, գործով ու զենքով, ինչպես նրա ազգակիցներից շատերը, ինչպես նրա ժողովուրդը:

---

<sup>1</sup> Ալաջաջյան Ստ., Չսպիացած վերք, հ. II, գիրք 3-րդ, Երևան, 2019, էջ 316:



Թեն հերոսաբար մարտնչում են ֆնդիճաքցիները, սակայն այդպես էլ չի լինում *«փառաբանությունն Աստծո եւ հերկիր խաղաղություն, ի մարդիկ հաճություն»*:

Դատարկվում է Կիլիկիայի ինքնապաշտպանության վերջին հենարաններից մեկը, ու այլևս Դրագարկի դպրեվանքը սասներ չէր ընդունելու, Թորոս իշխանի գերդաստանի աճյուններին այցելողներ չէին լինելու, մոռացվելու էին Ռուբեն և Հեթում թագավորների դամբարանները, հայոց կաթողիկոսների՝ Գրիգոր Տղայի, Գրիգոր Քարավեժի, Հովհաննես Մեծաբարոյի ու Կոստանդին Բարձրաբերդցու սրբատեղիներում աղոթողներ չէին լինելու: Չէին տոնվելու Խաչվերաց, Աստվածածնի, Հարության ու այլ տոները, որ ժողովրդի և երկրի ապրելու առհավատչաներն էին: Սրբացած այդ հողերի վրա պիտի իջնեին խոշոր ցիներ, ուրուրներ ու անգղեր, երկիրը մնար մարդակերպ բորենիներին: Ավերման մեջ մնացին նաև Տիգրանակերտի սրբավայրերը, կիլիկյան իշխանների ապարանքները, Խոշաբ գետի եզրին կառուցված Անգղ վանքը, Վասպուրական աշխարհի հարյուրավոր ուխտատեղիներն ու մենաստանները, Տարոն աշխարհի եկեղեցիները, Խարբերդի մատուռները...

Ինչ-որ կերպ, ինչ-որ չափով Ալաջաջյանի այս վեպը այդ աշխարհի ու այդ ժողովրդի արարող ոգու և ազատասիրության իրական պատմությունն է, այդ ամենի այրման ու ոչնչացման պատմությունը, բայց ամենից առավել՝ արևմտահայության հուսավատ դիմադրության վառ էջերից մեկը, որովհետև եթե չգրվեր այս վեպը, քչերը պիտի տեղեկանային Ֆնդիճաքի իրական հերոսամարտի մասին:

Վեպի վերջնամասերում Ալաջաջյանը կերտել է մի պատկեր՝ ջութակի աղեղի սահումը լարերի վրայով ու հնչեցումը Շոպենի «Ցայգային» նոկտյուրնի: Տխրության ու կարոտի այդ մեղեդին անլուր թախծի հեկեկոց է պարունակում, որն այնքան հարիր է վեպի շատ հերոսների ֆիզիկական ու հոգեկան անդառնալի կորուստներին՝ *«Ե՛տ աղի...»*: Բայց այլևս ոչինչ չէր մնացել, ու ոչ ոք չէր մնացել ետ գալու համար: Ամեն ինչ ամայացած էր ու ավերված: Եվ որևէ ինդրաբերգ չէր կարող այդ ամենից նշխար իսկ ետ բերել: Պատերազմի օրերին գերմանական պաշտոնական թերթերը վկայում էին, որ Թուրքիայում հայերի թիվը երկուսուկես միլիոնն անցնում է: Ի՞նչ եղան այդ մարդիկ: *«Ե՛տ աղի...»*, ո՞ր տեղից, ո՞ւր... Բայց կա՛ր ու պիտի մնար մի երգ, որ ընդվզման ու կռվի երգն էր, որը և Ալաջաջյանի այս վեպում լսվում է որպես անլռելի ու անձկելի մեղեդի՝ հավերժացնելու համար բոլոր նրանց կյանքն ու գործը, ովքեր հայրենական հողերի վրա հնչեցրին պայքարի անմարելի *«նոկտյուրնը»*:

Այս վեպը չի գրվել այդ մարդկանց վերադարձնելու համար: Ըստ էության նրանք չեն հեռացել ու ձուլված են իրենց սուրբ հողին: Գրվել է, որ այլևս չկատարվի այն, ինչ տեսան ու ինչի մեջ ապրեցին նրանք, ավելի ստույգ՝ **չապրեցին** նրանք: Ու նաև այն բանի համար, որ մեծ տերությունները չշարունակեն դավել իրենց շահերի համար, իսկ մարդասպան իշխանություն-

ներն ու ժողովուրդները դադարեցնեն արյան իրենց ծարավը: Եվ ուրեմն, Ալաջաջյանի գիրքն իր ամբողջության մեջ հնչում է նաև որպես դատապարտանքի խոսք ամեն մի պատերազմի ու սպանդի: Չէ՞ որ բոլոր ժամանակներում էլ կովող կողմերը գոհերն են իշխանություններում գտնվող արյունախում մարդկանց շահերի ու գաղափարների: Եվ, ինչպես գրում է հեղինակը, ո՞վ է թաղում նրանց, և ո՞վ հիշում, և ո՞վ է բուժում ժողովուրդների վերքերը: Միակ իրականը միշտ էլ հազարավոր թաղումներն են մնում. *«Թաղում՝ առանց արարողության, անարցունք, առանց հարազատ ձեռքերի, անձանոթների ձեռքով. անձանոթներ, որոնք թաղում են անձանոթների, անձանոթ զինվորների շիրիմներ՝ անձանոթ տխրության ներքո»*<sup>1</sup>:

Այս գիրքը նաև մարդ արարածի մասին է ու պետությունների, արդարության և հանցագործության մասին: Այն մասին, թե ինչպիսին չպիտի լինել և ինչպիսին պիտի լինել: Հարց, որ միայն հայ ժողովրդին չի վերաբերում, այլև ամբողջ մարդկությանը, որի կատարած փոքր ու մեծ սպանդները, շահադիտական և ազգայնամուլական գործունեությունները առթեցին բալկանյան պատերազմները, որոնք իրենց հերթին ծնեցին Առաջին համաշխարհային պատերազմը, որն էլ պիտի նախապատրաստեր Երկրորդ համաշխարհային պատերազմը:

*«Պահեա՛ն պահպանեա՛»:*

Այս վեպը նաև մի աղոթագիրք է առ *«պահպանումը»*... բոլոր ընկածների, բոլոր հայ նահատակների, որ տարածված են գաղթի ճամփաներին, բողոք է բոլոր այն մարդասպանների դեմ, ովքեր ծաղկած մի երկիր դարձրին արյան ծով: Ու նաև հաստատումն է այն բանի, որ թուրքերը **անասրելի աշխարհ** դարձրին այն երկիրը, որ հայ սերունդների ձեռակերտած դրախտն էր:

Վեպն ընթերցելուց հետո ավելորդ է դառնում հարցնել՝ ինչպե՞ս եղավ: *«Այսպե՛ս եղավ»*, – ասում է Ալաջաջյանը, ու նաև պատասխանում, թե ինչ անել, որ ոսոխն այլևս չհամարձակվի սուր բարձրացնել հայի դեմ: Տեղին է մտաբերել վեպի գլխավոր հերոս Գինդի՝ իր թղթապանակում կատարած գրառումներից մեկը. *«... ո՛չ հայոց ամրոցները, ո՛չ հայոց բերդերը, ո՛չ հայոց եկեղեցիները չկարողացան պաշտպանել մեզ մեր թշնամուց: Մեզ պաշտպանեց մեր գիրը, դպրությունը, լեզուն, մշակույթը:*

*Գիրը հավերժանալու միջոց է»*<sup>2</sup>:

Ալաջաջյանի «Չսպիացած վերք» վեպը մեր ժողովրդի **հավերժանալու** այն գրքերից մեկն է, որով պետք է պաշտպանվեն նաև գալիք սերունդները: Բայց սա այն դեպքում, երբ աշխարհն ինքը կդառնա ազնիվ ու արդար: Ու քանի չի դարձել, գիրն ու գենքն են մնալու գոյության երաշխավոր:

Ալաջաջյանի քաղաքացիական ազնվությունը նրան մղել է անկեղծ խոսք

<sup>1</sup> Ալաջաջյան Ստ., Չսպիացած վերք, հ. II, գիրք 3-րդ, էջ 435:

<sup>2</sup> Ալաջաջյան Ստ., Չսպիացած վերք, հ. I, գիրք 4-րդ, Երևան, 2019, էջ 555:

ասել նաև մեր անցած ճանապարհի վերաբերյալ, նորից ու նորից մեր ժողովրդի ոչ վաղ պատմությունը իմաստավորել ու վերաիմաստավորել, այդ թվում և՛ թույլ տրված սխալները գիտակցել տալ. *«Անգեն հայ բնակչություն, աղմկող կուսակցություններ, աղոթող երկու կաթողիկոս և երկու պատրիարք, երկու ազգային պատվիրակություն, մեկը՝ Փարիզում, մյուսը՝ Պետերբուրգում, գրողներ և գրասերներ, եվրոպականամետ կամ ռուսամետ մտավորականություն, առևտրականներ և ծերացած հարուստներ, վարժապետներ...»*<sup>1</sup>:

Վեպն արդիական է նաև նրանով, որ հաստատում է, թե քաղաքական ու ազգային խնդիրները չպետք է դիտել լոկ ներերկրային իրողությունների դիրքերից: Իրադարձությունների զարգացումները աշխարհում հաճախ կատարվում են մեծ տերությունների հաշվեմատյանների թելադրանքով, և դրանք պետք է կարողանալ ճիշտ *«կարդալ»*:

Այսօր էլ Թուրքիան ապավինում է երկու բանի՝ ուրանալ ցեղասպանությունը կամ արդարացնել այն:

Հիմա նա դեռ կատարում է առաջինը: Երբ աշխարհն ընդունի առաջինը, նա կակաի երկրորդը՝ արդարացումը: Կատարված ջարդերի ու կոտորածների համար երիտթուրքերը չդատապարտեցին սուլթան Աբդուլ Համիդ II-ին: Իրականացված եղեռնի համար հանրապետական Թուրքիան չմեղադրեց երիտթուրքերին: Նրանց հետևորդները ևս չեն դատապարտելու իրենց նախորդներին:

Գուցե և կգան ժամանակներ, երբ աշխարհը հաշիվ կպահանջի Էնվերի, Թալեաթի և մյուս ջարդարարների կատարածների համար: Բայց առայժմ մարդասպանների թոռները նրանց արձաններն են կանգնեցնում իրենց քաղաքներում\*:

Ամեն մի գեղարվեստական երկի հաջողության գրավականը հեղինակային լեզուն է: Այս առումով ևս Ալաջաջյանի վեպը առանձնանում է: Գրողը ամբողջ շարադրանքի ընթացքում դրսևորում է ոչ միայն նյութի ու ասելիքի համակողմանի իմացություն, այլև՝ այդ ամենը խոսքի վերածելու չափ ու կշիռ, լեզվական և ոճական դիպուկ ու հարուստ պատկերավորումներ, մատուցման և ձևակերպումների գրավիչ գյուտեր, այլասացություններ: Բազում օրինակներից հիշատակենք միայն մեկը, որն առաջին հայացքից թվում է, թե լոկ բնության մեջ տեղի ունեցող մի երևույթի նկարագրություն է. *«... ամպի մի ծվեն Սև ծովի կողմից, ծովի վրայով, աննկատելիորեն ու անձոնչ ժամանեց Ստամբուլի երկինքը: Այնտեղ ծվենը մեծացավ, սևացավ, ապա ուռեց, իջավ, իջավ, մինչև որ ծածկեց կանաչ բլուրները, մի ծայրով միսրճվեց Բոսֆորի ջրերի մեջ, մյուս ծայրով՝ Մարմարա ծովը: Հետո միանգամից հեղեղ*

<sup>1</sup> **Ալաջաջյան Ստ.**, Չսպիացած վերք, հ. III, գիրք 3-րդ, Երևան, 2019, էջ 488:

\* Թալեաթի աճյունը 1943 թ. Բեռլինից տեղափոխվեց Կ. Պոլիս, որտեղ կառուցվեց դամբարան, իսկ 1965 թ. կանգնեցվեց նրա արձանը:

*թափեց քաղաքի վրա, ջրվեժի պես աղմկեց, ապա քամվեց, քամվեց այնքան, որ սմբեց, դատարկվեց...»<sup>1</sup>:*

Վեպի սկզբում տրված այս պատկերից հետո ընթերցողը շուտով կռահում է, որ «աննկատելիորեն» ժամանած այդ տեղատարափը հենց այն սև իրադարձություններն են, որ «հեղեղի» ձևով պիտի իջնեին ու մխրձվեին պոլսահայության գլխին, և Ստամբուլի «կանաչ բլուրները» «ամբեին» ու «դատարկվեին»:

Առհասարակ, պետք է նշել, որ թեև վեպի էջերի մեծ մասը վերաբերում է պատմական մի կարճ ժամանակահատվածում տեղի ունեցած քաղաքական ու ազգամիջյան դեպքերին, աշխարհին պատուհասած պատմական փաստերի վերհանումներին, սակայն հեղինակը չի տրվում լոկ այդ ահավոր երևույթներն արձանագրողի գայթակղությանը: Նրա ամեն մի խոսքը, ամեն մի տողը շաղախված են զգայական և հուզական տարրերով, գայրույթի, ընդվզման, ցավի ու մորմոքի արտահայտություններով, որոնք փոխանցվում են ընթերցողին, պարուրում նրան, և այդ ամենը՝ արևելահայերենի և արևմտահայերենի ընտիր գուգադրություններով:

Նշենք նաև, որ Ալաջաջյանը միայն իրեն հայտնի իմացականությամբ կարողանում է ընթերցողին «տեղափոխել» պատմական այդ ժամանակաշրջան, հետ տանել նրան XX դարի առաջին տասնամյակներ, նրան ուղղակի կերպով «մասնակից» դարձնել ծավալվող իրադարձություններին, անգամ «ակնատեսն» ու «վկան» դարձնել: Այս **համաներկայության** գաղտնիքներից մեկն այն է, որ հենց ինքը՝ հեղինակը, առանց միջնորդավորման, «մասնակիցն» է եղել այդ ամենին իր գերդաստանի պատմությամբ ու իր անձնական կենսագրությամբ: Գաղտնիքի բացատրություններից մեկն էլ այն է, որ Ալաջաջյանը, լայն առումով, քաջատեղյակ է աշխարհաքաղաքական խարդավանքներին, Թուրքիայում դարերից ի վեր զարգացող նենգություններին, այդ երկրի մայրաքաղաքում՝ Կ. Պոլսում, և Թուրքիայի մի երկրորդ «մայրաքաղաք» դարձած Բեռլինում նյութվող սադրանքներին, պոլսահայության կյանքի մանրամասներին և, ամենակարևորը, իր սրտի թրթիռներից ու ջերմությունից անթեղված Արևմտահայաստանի և Կիլիկիայի բնակավայրերի, բնության, մարդկանց, կենդանական ու բուսական աշխարհների կանչերին: Գինդի մի ինքնագրույցը՝ «Հայի զգացումը հայ խոսքի մեջ ամփոփել», շատ հարմար է ամբողջ վեպը բնութագրելու համար:

Ալաջաջյանն օգտագործում է նաև նուրբ հումոր. այսպես, խոսելով դաշնակից երկրների մարտանավերի մասին, որ մասնակցում էին Դարդանելի նեղուցի գրավմանը, գրում է, որ նրանք «... **արագաշարժ կրիաների պես պեղեցին ջրերը**» (ընդգծումը – Ա. Ա.): Եվ կամ, սարկազմի օրինակ՝ այդ մարտանավերից շատերը կրում են հավակնոտ ու ամբարտավան անվանում-

---

<sup>1</sup> Ալաջաջյան Ստ., Չսպիացած վերք, հ. I, գիրք 1-ին, Երևան, 2019, էջ 61-62:

ներ՝ թարգմանաբար՝ անդիմադրելի, անճկելի, վսեմաշուք, վրեժ... , որոնք բոլորն էլ, ինչպես գրում է հեղինակը, **ականների գոհեր դարձան:**

Ահա այս ամենի հաշվառմամբ է, որ Ալաջաջյանի գրականությանը լավատեղյակ գրականագետ Սևակ Արզումանյանը 2008 թ. տպագրած իր «Ստեփան Ալաջաջյան» գրքում այս գործը իրավացիորեն համարել է *«հայ արդի վեպի հաջողված էջերից մեկը»*<sup>1</sup>:

Ասվածին հավելենք՝ այս վեպը, որ հյուսվել է հեղինակի արցունքներից, և որը կարելի է գլխագրով «Չոն» անվանել իր բոլոր իմաստներով՝ հուշարձան, հուշաքար, կոթող, վեմ... , դեռ երկար ճանապարհ ունի անցնելիք՝ ի հիշատակ հայոց եղեռնի բոլոր նահատակների և ի գիտություն գալիք սերունդների:

### **Արծրուն Ավագյան – *Գեղարվեստական պատկերը և կերպավորումը Ստեփան Ալաջաջյանի «Չսպիացած վերք» վեպում***

Հոդվածում ազգային-քաղաքական և աշխարհաքաղաքական խնդիրների լույսով, գաղափարական և գեղարվեստական չափումներով վերլուծության է ենթարկվում հայ գրականության տաղանդավոր ներկայացուցիչներից մեկի՝ Ստեփան Ալաջաջյանի «Չսպիացած վերք» վեպը: Եռսահատոր այս վեպը պատմական հավաստիությանը, մատուցվող նյութի խորությամբ և գործող հերոսների գրավիչ մարմնավորումներով պատկերում է արևմտահայոց ծանր ու օրհասական վիճակը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում և Կիլիկիայի բնակավայրերից մեկի՝ Ֆնդիճաքի մղած ինքնապաշտպանական հերոսամարտը: Հանգամանորեն քննարանվում են վեպի պատկերակերտման առանձնահատկությունները, կերպարային հարուստ համակարգը, «համաներկայության» սկզբունքը՝ հեղինակի՝ ընթերցողին XX դարի առաջին տասնամյակներ «տեղափոխելու», ծավալվող իրադարձություններին *«մասնակից»*, անգամ *«ականատես»* ու *«վկա»* դարձնելու հմտությունը, «հայի զգացումը հայ խոսքի մեջ ամփոփելու» հնարագիտությունը, ինքնօրինակ լեզվամտածողությունը:

### **Ариун Авакян – *Художественный образ и изображение в романе Степана Аладжаджяна «Незажившая рана»***

**Ключевые слова** – Степан Аладжаджян, Нане, «Незажившая рана», Константинополь, роман, дипломатия, западные армяне, преобразования, депортация, познавательная ценность, свободолюбивый дух, патриарх, атамартик (воин-освободитель)

В статье в свете национально-политических и геополитических проблем, в идейно-художественном измерении анализируется роман одного из талантливых представителей армянской литературы Степана Аладжаджяна – «Незажившая рана». Эта трилогия с исторической достоверностью, глубиной подаваемого материала и притягательными воплощениями действующих лиц изображает тяжелое положение Западной Армении в ходе

---

<sup>1</sup> **Արզումանյան Ս.**, Ստեփան Ալաջաջյան, Երևան, 2008, էջ 116:

Первой мировой войны и героическое оборонительное сражение в одном из киликийских поселений – Фндичаке. обстоятельно исследуются изобразительные особенности романа, богатая галерея образов, принцип «соприсутствия»: умение автора «переместить» читателей в первые десятилетия XX века, сделать их «участниками» разворачиваемых событий, даже «очевидцами» и «свидетелями», изобретательность в «обобщении чувств армян в армянском слове», оригинальное языковое мышление.

**Artsrun Avagyan – *Artistic Image and Characterization in Stepan Alajajyan’s Novel “An Unhealed Wound”***

*Key Words* – Stepan Alajajyan, Gind, Nane, “An Unhealed Wound”, Constantinople, novel, diplomacy, Western Armenians, reforms, deportation, cognitive value, freedom-loving spirit, patriarch, freedom fighter

The article analyses the novel “An Unhealed Wound” by one of the most talented representatives of Armenian literature Stepan Alajajyan in the light of national, political and geopolitical issues in ideological and artistic dimensions. The three-volume novel depicts the difficult and cruel situation of Western Armenians during World War I and the heroic self-defense battle fought by Fnditchak, one of the settlements of Cilicia, with historical certainty, deep plot and vivid characters. The peculiarities of the novel’s imagery, the rich system of characters, the principle of “coexistence”, i.e. the author’s ability to “move” the reader to the first decades of the XX century making him the “participant”, the “eyewitness” or the “witness” of the unfolding events, the ingenuity of “summarizing the feelings of an Armenian in Armenian words”, and the original linguistic thinking have been studied comprehensively.

Ներկայացվել է 08.09.2020

Գրախոսվել է 31.08.2020

Ընդունվել է տպագրության 14.04.2021